

ՎԻՍՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

(Ծննդյան 50-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համարձումյանը մեր ժամանակի խոշորագույն աստրոֆիզիկոսներից է:

Նա ծնվել է 1908 թվականին մտավորականի ընտանիքում: Մանուկ հասակում նա հանդես է բերում մեծ հետաքրքրություն ճշգրիտ գիտությունների նկատմամբ: Դեռ դպրոցական տարիներին արտահայտվեցին նրա մաթեմատիկական աչքի բնկնող ընդունակությունները: Այդ շրջանում նա ինքնուրույն կերպով զբաղվում է աստղագիտության ու անասկան ֆիզիկայի հարցերով և հատկապես տարվում Ալբերտ Էյնշտեյնի ստեղծած հարաբերականության տեսությունով:

Ապագա գիտնականի հայրը՝ Համազասպ Ասատուրի Համբարձումյանը շատ վաղ հասկացավ իր որդու բացառիկ ձիրքը և օժանդակեց նրան ստանալու իր ձգտումներին ու հակումներին համապատասխան հիմնավոր կրթություն, մի բան, որ մեծապես նպաստեց Վ. Համբարձումյանի ընդունակությունների լիակատար ծաղկմանը:

Միջնակարգ դպրոցը Թբիլիսիում ավարտելուց հետո 1924 թ. Վ. Համբարձումյանը Լենինգրադում ընդունվում է Մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ, իսկ մեկ տարի հետո փոխադրվում Լենինգրադի Համալսարան:

1926 թ. հրապարակվում է նրա առաջին գիտական աշխատանքը (հեղինակակից Ն. Ա. Կոզիրև) արեգակնային ջրհերի մասին: Մինչև համալսարանն ավարտելը Վ. Համբարձումյանը հրապարակում է շուրջ տասը գիտական հոդված, նվիրված տեսական ֆիզիկայի, աստրոֆիզիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի տարբեր պրոբլեմներին:

1928 թ. Վ. Համբարձումյանն ընդունվում է Պուլկովյան աստղադիտարանի ասպիրանտուրան: Այդ պահից Վ. Համբարձումյանը հակվում է աստղագիտությանը և իր ուժերն ու ժամանակը ամբողջապես նվիրում է տեսական աստրոֆիզիկային ու աստղաբաշխությանը: Այդ մի

ժամանակաշրջան էր, երբ ատոմի ժամանակակից տեսության առաջացումը ստեղծել էր անհրաժեշտ նախադրյալներ դեռևս շատ երիտասարդ տեսական աստրոֆիզիկայի բուռն ծաղկման համար: Վ. Համբարձումյանը դարձավ առաջին տեսաբան-աստրոֆիզիկոսը Սովետական Միության մեջ:

Իր տեսական աշխատանքներում Վ. Համբարձումյանը հիմնական շեշտը դնում է քննարկվող պրոբլեմի ֆիզիկական կողմի վրա, մաթեմատիկական ապարատը դիտելով որպես հետազոտության շարժառնյակ կարևոր և անհրաժեշտ, սակայն միայն օժանդակ միջոց պրոբլեմի լուծման համար: Իր այդ մոտեցմամբ նա սահմանազատվեց աստրոֆիզիկայի արևմտյան շատ ներկայացուցիչներից, որոնց աշխատանքներում, իր իսկ Վ. Համբարձումյանի վկայությամբ, ռեկատեի է այս կամ այն հարցի լուծման ժամանակ ծագող մաթեմատիկական խնդիրներով հրապարակելը և բացակայում է այն հիմնական ֆիզիկական ենթադրությունների գործնական քննարկումը, որոնց վրա տվյալ տեսությունը հենվում է¹:

Վ. Համբարձումյանի գիտական հետաքրքրությունների օրեցօր լայնացող շրջանը, նոր և ինքնատիպ գաղափարների առատությունը և մտքի խորությունը նոր մոտեցման շնորհիվ շատ շուտով տվին իրենց բեղմնավոր արդյունքները:

1932 թ. լույս տեսավ Վ. Համբարձումյանի «Մոլորակաձև միգամածությունների ճառագայթային հավասարակշռության մասին» աշխատությունը, որի մեջ առաջ քաշված գաղափարները բնկած են գաղափին միգամածությունների ֆիզիկայի ժամանակակից տեսության հիմքում: Այդ աշխատանքով սկսվում է Վ. Համբարձումյանի գաղափին միգամածությունների ֆիզիկայի հարցերին (Լենինգրայի տեղափոխման, ատոմների գրգռման և իոնացման, «ար-

¹ В. А. Амбарцумян, Теоретическая астрофизика, М., 1939.

գելված» գծերի ճառագայթման և ալյն) նվիրված աշխատանքների արժեքավոր սերիան:

Այդ տարիներին Ն. Ա. Կողերևի հետ կատարած աշխատանքում առաջին անգամ մշակվեցին աստղերը շրջապատող գազային թաղանթների զանգվածների որոշման մեթոդները, որոնց կիրառությամբ Նոր, Գերնոր և այլ տիպերի անկայուն աստղերի թաղանթների նկատմամբ ստացվեցին կոսմոգոնիկ կարևոր նշանակություն ունեցող արդյունքներ:

1936 թ. Վ. Համբարձումյանը մշակեց աստղերի տեսագծային արագություններով նրանց ռադիական արագությունների բաշխման ֆունկցիայի որոշման ընդհանուր տեսությունը:

Գիտական մեծ ներդրում էր գիտության մեջ աստղային սիստեմների համար Վ. Համբարձումյանի կողմից մշակված հատուկ ֆիզիկական վիճակագրությունը: Նոր վիճակագրության մեթոդները Վ. Համբարձումյանի կողմից հաջողությամբ կիրառվեցին կրկնակի աստղերի և աստղակույտերի, իսկ հետագայում նաև աստղասփյուռների և արտաքին գալակտիկաների ֆիզիկական սիստեմների նկատմամբ ու հանգեցրին շատ կարևոր արդյունքների:

1935—37 թթ. է վերաբերում Վ. Համբարձումյանի գիտական բանավեճը անգլիական նշանավոր գիտնական Զինսի հետ՝ մեր աստղային համակարգության—Գալակտիկայի ժամանակակից վիճակի տեղություն (հասակի) մասին: Նա ցույց տվեց, որ Գալակտիկայի հասակը չի անցնում 1010 տարուց: Այդ գնահատականը հազար անգամ ուժելի փոքր էր, քան մինչև այդ ընդունված գնահատականը, որը հիմնված էր Զինսի ստացած արդյունքի վրա:

Համբարձումյանը ցույց տվեց, որ Զինսի այդ արդյունքը հետևանք էր կրկնակի աստղերի վերաբերյալ գիտական տվյալների սխալ տեսական մեկնաբանության: Վ. Համբարձումյանի հզորակայությունը հաստատվեցին հետագա հետազոտություններով:

Վ. Համբարձումյանի յուրօրինակ աշխատանքները շուտով լայն ճանաչում ստացան գիտական աշխարհում և ըստ արժանվույն գնահատվեցին: 1934 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, մի տարի անց առանց դիսերտացիայի պաշտպանության՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1939 թ. Վ. Համբարձումյանն ընտրվում է ՍՍՍՐ ՖԱ Թղթակից անդամ:

Վ. Համբարձումյանի աշխատանքների մի ստվար սերիա նվիրված է Գալակտիկայի միջաստղային տարածության մեջ գտնվող նյութի կառուցվածքի ու ֆիզիկական բնույթի ուսումնասիրությանը:



Այդ աշխատանքներում առաջին անգամ համոզիչ կերպով ցույց է տրված, որ Գալակտիկայում լույսի կլանման երևույթը պայմանավորված է նրա սիստերիայի հարթության շուրջը կենտրոնացված բազմաթիվ փոշային միգամածությունների՝ կլանող ամպերի առկայությամբ: Միջաստղային կլանող միջավայրի այդպիսի պատահական կառուցվածքի վերաբերյալ պատկերացումը հաստատուն կերպով մտավ գիտության մեջ:

Իր կատարած հետազոտությունների հիման վրա Վ. Համբարձումյանը մշակեց մի ինքնատիպ տեսություն (ֆլուկտուացիաների տեսություն), որը թույլ է տալիս միջաստղային կլանող ամպերի կարևոր հատկությունները բնութագրող մեծությունները որոշել աստղերի ու արտադրակալիկ միգամածությունների տեսանելի բաշխման ուսումնասիրությունից: Այդ տեսությունը կարևոր դեր խաղաց կլանող ամպերի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրության գործում և ստեղծեց մի նոր ուղղություն աստղաբաշխության մեջ:

1941 թ. Վ. Համբարձումյանը նշանակվում է Լենինգրադի Պետական համալսարանի ֆիզիկալ պետ Նլաբուզա քաղաքում, որտեղ պատերազմի պատճառով էվակուացվել էին Համալսարանի կարևորագույն գիտական լաբորատորիաները: Այնտեղ տարվում էին պաշտպանական նշանակություն ունեցող հատուկ աշխատանքներ: Ֆիզիկալ գիտական ղեկավարությունը Վ. Համբարձումյանը համատեղում է՝ պղտոր միջավայրերում լույսի ցրման տեսության պրոբլեմի վրա իր աշխատանքի հետ: Այդ

տարիներին՝ Վ. Համբարձումյանի մշակած լույսի ցրման նոր և յուրօրինակ տեսությունը, նրա «Իմքում ընկած Քինվարիանություն սկզբունքը» խոշոր ավանդ հանդիսացան գիտության մեջ և ունեն կարևոր նշանակություն Երկրագնդի, մոլորակների, աստղերի և Արեգակի մթնոլորտների ուսումնասիրության հետ կապված շատ հարցերի լուծման համար:

1943 թ. ստեղծվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան: Վ. Համբարձումյանը ընտրվում է Ակադեմիայի իսկական անդամ և վիցե-պրեզիդենտ: Շուտով նա մշտական բնակություն է սեղանի վրայում՝ Երևան և իր ձեռքը վերցնում Ակադեմիայի Երևանի աստղագիտարանի ղեկավարությունը:

1946 թ. Վ. Համբարձումյանի նախաձեռնությամբ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ սկսվում է Ակադեմիայի Բյուրականի աստղաֆիզիկական դիտարանի (աստղագիտարանի) շինարարությունը: Շինարարության հետ զուգընթաց Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ նրա հայաշակերտների մի փոքրիկ խումբ սկսում է Գալակտիկայի կառուցվածքի ուսումնասիրության ուղղությամբ դիտողական աշխատանքներ: Ինքը՝ Վ. Համբարձումյանը զբաղվում է աստղերի և աստղային սիստեմների վերաբերյալ եղած հարուստ դիտողական նյութի մանրամասն վերլուծությամբ:

Այդ աշխատանքը, որը Վ. Համբարձումյանի կողմից փաստորեն սկսված էր դեռևս 1937 թ., 1947 թ. պսակվեց նոր տիպի աստղային սիստեմների՝ աստղասփյուռների հայտնագործությամբ: Այդ հայտնագործումը՝ նրա հիման վրա Վ. Համբարձումյանի կողմից ստացված եզրակացությունների նշանակությամբ, գիտության մեջ խոշորագույններից մեկն է վերջին տասնամյակների բնթագրում:

Աստղասփյուռները ֆիզիկապես իրար հետ կապված աստղերի դինամիկական տեսակետից անկախ խմբեր են: Հաշվումները ցույց են տալիս, որ այդ անկախությունն հետևանքով նրանք պետք է բայրավեն շատ կարճ ժամանակամիջոցում (ժամանակի կոսմիկական մասշտաբով):

Աստղասփյուռների հոյունությունը Գալակտիկայի կյանքի ներկա փուլում, վկայում է այդ սիստեմների և նրանց մեջ մտնող աստղերի երիտասարդության մասին:

Աստղասփյուռների բաղմունքների ուսումնասիրության հիման վրա Վ. Համբարձումյանը ստեղծեց աստղասփյուռների տեսությունը: Այդ տեսության ամենակարևոր արդյունքը (դիտական և փոխադրական տեսակետից) Գալակտիկայում աստղառաջացման պրոցեսի շարունակական բնույթի վերաբերյալ եզրակացությունն է:

Նախկան բնույթի վերաբերյալ եզրակացությունն է, որի համաձայն աստղերը Գալակտիկայում առաջացել են նրա կյանքի տարբեր փուլերում և աստղառաջացման պրոցեսը նրա ներսում ներկայումս շարունակվում է:

Աստղասփյուռների տեսության օգտին վերջին տարիներս մի շարք արդյունքներ են ստացվել սովետական և օտարերկրյա գիտնականների աշխատանքներում:

Այսպես, օրինակ, 1949 թ. աստղասփյուռների անկախությունից ելնելով Վ. Համբարձումյանը կանխագուշակել էր նրանց լայնացումը տարածության մեջ: Այդ կանխագուշակությունը շուտով փայլուն կերպով հաստատվեց Հոյանդիայում, ՍՍՌՄ-ում և ԱՄՆ-ում այդ սիստեմների վերաբերյալ փաստական տվյալների հիման վրա: Աստղագիտության պատմության մեջ վերջին կես դարում դժվար է նշել նախկինում բոլորովին անհայտ երևույթի տեսական կանխագուշակության մի ալլ, ավելի զարմանալի օրինակ, քանի որ կանխագուշակությունը վերաբերում էր աստղերի բոլորովին նոր տեսակի շարժումների (աստղային սիստեմների քայքայում և լայնացում), որոնք ինչպես իրենց բնույթով, այնպես էլ նրանց սլայմանավորող պատճառներով խիստ տարբերվում էին այն ամենից, ինչ մինչ այդ ուսումնասիրվում էր աստղագիտության մեջ ընդհանրապես, և աստղային դինամիկայում մասնավորապես:

Այսպիսով աստղասփյուռները դարձան աստղագիտության ձեռքում հզոր միջոց աստղերի ու աստղային սիստեմների առաջացման ու զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության գործում:

Վ. Համբարձումյանի հետագա աշխատանքները նվիրված էին աստղասփյուռների տեսության զարգացմանը՝ այդ սիստեմների վերաբերյալ աշխարհի տարբեր աստղագիտարաններում նրանց հայտնագործումից հետո ստացված, բազմաթիվ նոր դիտողական տվյալների հիման վրա: Այդ տվյալների մի զգալի մասը ստացվել էր Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ գործող Բյուրականի երիտասարդ աստղագիտարանում:

Այդ շարքում դիտական հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Դ Յուլի տիպի և նրանց հարող որոշ փոփոխական աստղերի սպեկտրներում դիտվող անընդհատ առաքմանը նվիրված աշխատանքները:

Հիշյալ անկախ աստղերի ճառագայթման հզորության դիտվող փոփոխությունների տեսական վերլուծության միջոցով Վ. Համբարձումյանը ցույց է տվել, որ որոշ զեպերում նրանց մակերևույթային շերտերում առաջանում են ոչ ջերմային բնույթի ճառագայթման կներ-

գիայի հզոր աղբյուրները Ոչ ջերմային բնույթի ճառագայթման այդ էներգիան, Վ. Համբարձումյանի կողմից զարգացված պատկերացումների համաձայն, անմիջականորեն արտաբերվում է աստղի ներքին շերտերից՝ այն կրող նյութի հետ միասին: Իսկ ինքը՝ անընդհատ առաքման երևույթը կապվում է նյութի նախաստղային վիճակի գոյության և երիտասարդ աստղերի ներքին շերտերում այդ վիճակում գտնվող նյութի որոշ քանակների առկայության հետ: Հենց որպես այդ էներգիայի արտաբերման անմիջական հետևանք է դիտվում ոչ ջերմային բնույթի ճառագայթման մասնակցությունը անկայուն աստղերի ընդհանուր ճառագայթման մեջ:

Վերջին տարիներս անընդհատ առաքման ոչ ջերմային բնույթի վերաբերյալ Վ. Համբարձումյանի կարևոր եզրակացությունը հաստատող դիտողական մի շարք տվյալներ ստացվեցին Բյուրականում և մի քանի օտարերկրյա աստղագիտարաններում (Մեքսիկա, ԱՄՆ, ԳՖՄ):

Անհրաժեշտ է նաև հիշատակել, որ անընդհատ առաքման երևույթը նորություն է գիտության մեջ, իսկ նրա հետ կապված ֆիզիկական պրոցեսների բնույթի բացահայտումը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջուկային ֆիզիկայի համար:

Վ. Համբարձումյանի վերջին աշխատանքները նվիրված են արտաքին գալակտիկաների բնույթի և էվոլյուցիայի հարցերին: Բազմազալակտիկաների ձևաբանական և դինամիկական ուսումնասիրության հիման վրա Վ. Համբարձումյանը ցույց է տվել, որ գալակտիկաների առաջացման պրոցեսը տիեզերքում ներկայումս շարունակվում է, ըստ որում ուժեղ ռադիոճառագայթում ունեցող գալակտիկաները՝ ռադիոգալակտիկաները, հավանաբար, նոր ձևավորվող և փոխադարձաբար ներթափանցող բազմազրիններից կազմված կրկնակի կամ բազմակի սիստեմներ են:

Էլիպտիկ գալակտիկաների մոտակայքում հայտնաբերված են կապույտ արբանյակներ և վիժվածքներ, որոնց գույնը անհնարին է բացատրել նույնիսկ նրանց ամբողջությամբ ջերմ աստղերից կազմված լինելու դեպքում: Այդպիսի անսովոր գույնի առկայությունը գիտվում է որպես ապացույց բնության մեջ նյութի նոր, արտակարգ վիճակի գոյության:

Արտաքին գալակտիկաներին նվիրված աշխատանքները գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն գալակտիկաների էվոլյուցիայի պրոբլեմի համար, այլ նաև, ինչ ոչ պակաս կարևոր է, նյութի առայժմ անհայտ վիճակների ուսումնասիրության համար:

Վ. Համբարձումյանի բոլոր աշխատանքներին հատուկ են արտակարգ պարզությունն ու խորությունը: Նրանք մեծ ազդեցություն են թողել ժամանակակից աստրոֆիզիկայի և աստղաբաշխության տարբեր ճյուղերի զարգացման վրա: Այդ աշխատանքներով գիտության մեջ ստեղծվել են մի շարք նոր ուղղություններ, որոնք ունեն իրենց բազմաթիվ հետևորդները աշխարհի տարբեր մասերում:

Վ. Համբարձումյանի հետազոտությունների մեծամասնությունն ունեն այնքան կարևոր նշանակություն, որ շարադրվում են շատ մենագրությունների և հատուկ կուրսերի, աստրոֆիզիկայի և աստղաբաշխության բոլոր դասագրքերի մեջ:

Հետազոտության նրա կողմից մշակված յուրօրինակ մեթոդները գրավել են իրենց արժանի տեղը ժամանակակից գիտության նոր մեթոդների զինանոցում և լայնորեն կիրառվում են բնության մեջ տեղի ունեցող ամենաբազմազան երևույթների ուսումնասիրության նպատակով:

Մեծ է նրա գերը հատկապես սովետական աստղագիտության զարգացման գործում: Վ. Համբարձումյանը Սովետական Միության մեջ տեսական աստրոֆիզիկայի զարգացման հիմնադիրը և ղեկավարներից մեկն է: Այդ բնագավառում սովետական գիտնականները ներկայումս գրավում են աշխարհում առաջավոր դիրքերը: Իրենց հետազոտություններով նրանք զգալի ներդրում են մտցրել այդ համեմատաբար երիտասարդ գիտության շատ բաժիններում: Եվ այդ գործում մեծ են Վ. Համբարձումյանի ծառայությունները: Իր աշխատանքներով Վ. Համբարձումյանը հարստացրել է գիտությունը նոր կարևորագույն նվաճումներով:

Անհրաժեշտ է ավելացնել, որ Վ. Համբարձումյանի մի շարք արժեքավոր աշխատանքները նվիրված են տեսական ֆիզիկայի և բարձրագույն մաթեմատիկայի հարցերին և լուրջ ավանդ են գիտության այդ ճյուղերի զարգացման գործում:

Դրանցից հատկապես պետք է նշել երկուսը: Նրանցից առաջինում, որը նվիրված է մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումների սեփական արժեքների տեսությանը, առաջին անգամ առաջ է քաշված և նախնական մշակման ենթարկված Շտուրմ-Լիուվիլի պրոբլեմի հակադարձ պրոբլեմը: Հետագայում այդ աշխատանքի հիման վրա ստեղծվեց նոր ուղղություն մաթեմատիկական ֆիզիկայում: Մյուս աշխատանքը (հեղինակակից Դ. Դ. Իվանենկո) վերաբերում է տեսական ֆիզիկային և ներկայացնում է հատուկ գիտական հետաքրքրություն: Այդ աշխա-

տանքում առաջին անգամ ցույց է տրված, որ ատոմի միջուկը կազմված է միայն ծանր մասնիկներից, ըստ որում այդ եզրակացությունն ստացված էր նեյտրոնների հայտնադործումից առաջ:

Շատ բեղմնավոր է եղել Վ. Համբարձումյանի աշխատանքը նաև աստրոֆիզիկոսների երիտասարդ կադրեր պատրաստելու գործում: 1931 թվականից նա կարդում է մի շարք ընդհանուր և հատուկ կուրսեր Լենինգրադի Պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում: Նույն թվականին Վ. Համբարձումյանը Սովետական Միության մեջ առաջին անգամ ներմուծում է տեսական աստրոֆիզիկայի դասավանդումը իր մշակած դասընթացով: Շուտով նա դառնում է համալսարանի աստրոֆիզիկայի ամբիոնի վարիչը: Երևանի տեղափոխվելուց հետո, 1944 թվականից նա Երևանի Պետական համալսարանում վարում է աստրոֆիզիկայի ամբիոնը: Լենինգրադի և Երևանի համալսարանում աշխատելու տարիներին Վ. Համբարձումյանը դաստիարակել է բարձր որակավորում ունեցող երիտասարդ աստրոֆիզիկոսների մի մեծ խումբ: Նրա անմիջական աշակերտների մեջ կան գիտության մոտ երեսուն թեկնածուներ և դոկտորներ, որոնք աշխատում են Սովետական Միության գրեթե բոլոր խոշոր աստղագիտարաններում ու մի շարք համալսարաններում:

Վ. Համբարձումյանը ուսանելն ընդվույն «Տեսական աստրոֆիզիկայի» առաջին դասադրքի հեղինակն է: Ժամանակակից տեսական աստրոֆիզիկայի հարցերի յուրօրինակ այդ հանրագիտարանը դաստիարակել է երիտասարդ աստղագետների մի ամբողջ սերունդ: Նրա մեջ առաջ բաշխված թափաղակները կյանքի են կոչել բազմաթիվ հետաքրքիր հետազոտություններ:

1952 թ. Վ. Համբարձումյանի խմբագրությամբ լույս տեսավ նրա, Է. Ռ. Մուստելի, Վ. Վ. Սորոկինի և Ա. Բ. Սենենու հետ համատեղ ստեղծած «Տեսական աստրոֆիզիկայի» նոր դասագիրքը, որը հետագա տարիներին թարգմանվեց անգլերեն, գերմաներեն և չինարեն լեզուներում:

Վ. Համբարձումյանի գիտական և մանկավարժական գործունեությունը նրա բոլոր փուլերում անխզելիորեն կապված է եղել գիտա-կադմակերպչական և հասարակական աշխատանքի հետ: Իր գիտական գործունեության առաջին տարիներին նա Պուլկովյան աստղագիտարանի գիտնական քարտուղարն էր: Այնուհետև Լենինգրադի համալսարանում նա աստղագիտարանի պրոֆեսորն ու գիտական մասի պոստդոկտորն էր: 1944—46 թթ. ՍՍՄԽ Գիտությունների ակադեմիայում նա ղեկավարում էր Աստրոֆիզիկական

հանձնաժողովը, իսկ 1952 թվականից՝ Կոսմոգոնիայի հանձնաժողովը: 1945—47 թթ. Վ. Համբարձումյանը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ էր, իսկ 1947 թվականից մինչև օրս նույն Ակադեմիայի պրեզիդենտը:

Հայաստանի երիտասարդ Ակադեմիան հասել է մեծ հաջողությունների, հատկապես ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառում: Բուռն զարգացում են ապրում նաև օդ-տակար հանածոների ուսումնասիրության և օդ-տագործման, ռադիոտեխնիկայի ու էլեկտրատեխնիկայի, էներգետիկայի ու քիմիայի, հայ ժողովրդի պատմական անցյալի ու հոգևոր կուլտուրայի ուսումնասիրության հետ կապված ուղղությունները: Ակադեմիան զգալի օգնություն է ցույց տալիս Հայաստանում արդյունաբերության գործիքաշինական, ռադիոտեխնիկական, էլեկտրատեխնիկական, քիմիական և այլ ուղղությունների զարգացմանը:

Որպես Ակադեմիայի Բյուրականի աստղագիտարանի գլխավոր Վ. Համբարձումյանը ղեկավարում է աստղագիտարանի, բացառապես նրա աշակերտներից կազմված, գիտական կոլեկտիվի աշխատանքը: Ամբողջ կոլեկտիվի համառ աշխատանքի շնորհիվ երիտասարդ աստղագիտարանը իր գոյության կարճ ժամանակամիջոցում դուրս է եկել սովետական առաջավոր աստղագիտարանների շարքը և հայտնի դարձավ գիտական աշխարհում:

Վ. Համբարձումյանն զգալի աշխատանք է կատարում որպես Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Զեկույցների» և «Բյուրականի աստղագիտարանի հաղորդումների» պատասխանատու խմբագիր, ՍՍՄԽ ԳԱ «Աստղագիտական հանգեսի» խմբագրական կոլեգիայի անդամ: Երկար տարիներ նա ղեկավարում էր Հայկական ԳԱ խմբագրա-հրատարակչական խորհուրդը:

1948—1955 թթ. Վ. Համբարձումյանը հանդիսանում էր Միջազգային աստղագիտական Միության (ՄԱԿ) վիցե-պրեզիդենտը:

Վ. Համբարձումյանի ելույթները, գիտական հաղորդումները և զեկույցումները միջազգային աստղագիտական համագումարներում և խորհրդակցություններում, արտասահմանյան (ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Ավստրիա, Բելգիա և այլն) տարրեր համալսարաններում և աստղագիտարաններում, միշտ գտնվել են ամբողջ աշխարհի խոշորագույն աստրոֆիզիկոսների ուշադրության կենտրոնում և օժանդակել հայրենական առաջավոր գիտության հեղինակության բարձրացմանը:

Վ. Համբարձումյանը ակտիվ մասնակցություն է ունենում մեր երկրի հասարակական կյանքին:

Որպես գիտական և քաղաքական գիտելիքների տարածման Հայկական ընկերության նախագահ նա ոչ միայն ղեկավարում, այլ նաև գործոն մասնակցություն է ունենում ժողովրդի մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների մասսայականացման և տարածման գործին:

Վ. Համբարձումյանը խաղաղության անխոնջ մարտիկ է: Նրկար ժամանակ նա ղեկավարել է խաղաղության պաշտպանության Հայկական կոմիտեն, մասնակցել խաղաղության կողմնակիցների համամիութենական և համաշխարհային մի շարք կոնգրեսներին:

1950 թվականից սկսած նա երեք անգամ ընտրվել է երկրի իշխանության բարձրագույն օրգանի՝ ՍՍՍՐ Գերագույն Սովետի ղեկավարում: 1948 թ. Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անդամ է:

Վ. Համբարձումյանի գործունեությունն ըստացել է բարձր գնահատական: Գիտության զարգացման գործում աչքի ընկնող ծառայությունների համար նա երկու անգամ արժանացել է Ստալինյան մրցանակի, պարգևատրվել է

Լենինի և Աշխատանքային Կարմիր Դրոշի երկու շքանշաններով, իսկ 1953 թ. ընտրվել է ՍՍՍՐ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Վ. Համբարձումյանն ընտրվել է նաև մի շարք օտարերկրյա ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամ: Նա հանդիսանում է Ավստրիական և Գերմանական Գիտությունների ակադեմիաների և Լյեծի (Բելգիա) Թագավորական գիտական ընկերության թղթակից-անդամ, Արվեստների և Գիտությունների Ամերիկյան Ակադեմիայի (Բոստոն) օտարերկրյա պատվավոր անդամ, Անգլիական Թագավորական աստղադիտական ընկերության և Ամերիկյան աստղադիտական ընկերության պատվավոր անդամ:

1956 թ. նրան գիտական ծառայությունների համար շնորհվել է ֆրանսիական Աստղադիտական ընկերության Ժանսենի անվան մեդալ:

Իր հիսնամյակը սովետական խոշորագույն աստրոֆիզիկոսը դիմավորում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում:

Նա լի է յուրօրինակ հղացումներով, ապագայի նկատմամբ համարձակ ու մեծ պլաններով: Նրանց իրականացումը, անկասկած, նոր ու հետաքրքիր շատ բան կբերի գիտությանը:

Լ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը կազմակերպվել է 1955 թվականին տնտեսագիտության սեկտորի հիման վրա, որը ստեղծվել էր 1943 թվականին Գիտությունների ակադեմիայի կազմակերպման ժամանակ: Անցած տարիների ընթացքում թե՛ սեկտորը, և թե՛ ինստիտուտը զգալի աշխատանք տարան ուսպուրիկայի առաջ կանգնած ժողովրդա-տնտեսական խնդիրների ուսումնասիրության ասպարեզում:

Ներկայումս Տնտեսագիտության ինստիտուտի գիտա-հետազոտական գործունեությունը ընթանում է հիմնականում չորս ուղղությամբ՝ սոցիալիզմի քաղաքատնտեսության և Հայաստանի տնտեսության պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի, գյուղատնտեսության էկոնոմիկայի և Հայաստանի ժողովրդական տնտեսության կոմպլեքս պրոլեմների ուսումնասիրության հարցերի շուրջը:

Այս հարցերի գիտական խորը ուսումնասիրության համար ինստիտուտը համալրված է համապատասխան բարձրորակ գիտական աշխատողներով, որոնց թվում կան տնտեսական

գիտությունների 6 դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների 13 թեկնածուներ և ավագ ու կրտսեր գիտական աշխատողներ: Նրանցից շատերը սովորել և գիտական աստիճան են ձեռք բերել Հայաստանում, ինչպես նաև Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներում ու բարձրագույն հաստատություններում:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ առաջին անգամ պայմաններ ստեղծվեցին Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման թե՛ ընթացիկ, և թե՛ հեռանկարային հարցերը վերլուծելու և գիտական մշակման ենթարկելու համար:

Հայ ժողովրդի անցյալի տնտեսագիտական մտքի զարգացման պատմությունը մինչև վերջին ժամանակները մարտիստական ուսումնասիրության և լուսաբանման չէր ենթարկվել: Մեր պատմիչների ձեռագիր աշխատություններում, ինչպես նաև հասարակական-քաղաքական մտքին վերաբերող տպագիր գործերում հարուստ նյութ կա հայկական տնտեսագիտական մտքի վերաբերյալ: Տնտեսագիտության ինստիտուտը